



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

22 դեկտեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 59 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սերգեյ Հարությունյանը, Սերգեյ Ներսեսյանը, Գայանե Մելքոն Մելքոնյանը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Դավիթ Համբարյանը, Երևանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հակոբ Կարապետյանը, Երևանի քաղաքապետի խորհրդականներ՝ Գարիկ Բարսեղյանը, Դավիթ Ճզնավորյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, լրատվության վարչության պետ Իոսիֆ Կուբատյանը:

Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով տեղեկացրեց, որ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամներ՝ Գրիգորի Երիցյանը և Գայանե Վարդանյանը դիմումներ են ներկայացրել ավագանու անդամի իրենց լիազորությունները դադարեցնելու մասին:

Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը հայտնեց, որ ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով, Երևան քաղաքի ավագանու անդամների կողմից ներկայացվել է «Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» ավագանու որոշման նախագիծ:

Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը տեղեկացրեց, որ հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասով՝ 2021 թվականի դեկտեմբերի 22-ին, ժամը 10:00-ին հրավիրվել է Երևան քաղաքի ավագանու նիստ՝ հետևյալ օրակարգով.

1. Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին:

Ներկայացված նախագծով առաջարկվում է.

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասով՝ անվստահություն հայտնել Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին և քաղաքապետի թեկնածու առաջադրել Երևանի ավագանու անդամ Հրաչյա Սարգսյանին:

Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասով, հայտնեց, որ քվեարկությունն անցկացվում է գաղտնի՝ քվեաթերթիկների միջոցով, որում ընդգրկված է քաղաքապետին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծով առաջադրված թեկնածուն: Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Քաղաքապետին անվստահություն է հայտնվում, եթե առաջադրված թեկնածուն ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Քվեարկության կազմակերպման աշխատանքները կիրականացվի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի անդամների կողմից:

«Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» նախագիծը ներկայացնելու համար ձայնը տրվեց նախաձեռնող խմբի անդամին:

Նախաձեռնող խմբի անդամ, Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը ներկայացրեց «Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» նախագիծը:

Արմեն Գալջյանին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

2. Էռնեստ Ավանեսով - Երևան քաղաքի ավագանու անդամ

3. Դավիթ Խաժակյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

4. Վահե Գևորգյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց նախաձեռնող խմբի անդամ, Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալստյանը:

Ելույթների համար գրանցվել են ավագանու 12 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան - Երևան քաղաքի ավագանու անդամ

2. Լևոն Հովհաննիսյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Լուսինե Գևորգյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Իզաբելլա Աբգարյան - Երևան քաղաքի ավագանու անդամ

5. Էննեստ Ավանեսով - Երևան քաղաքի ավագանու անդամ

6. Մարատ Թոխյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Թեհմինա Վարդանյան - Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

8. Վահե Գևորգյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

9. Պավել Սարգսյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

10. Դավիթ Խաժակյան - Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

11. Սաթենիկ Մկրտչյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

12. Սերգեյ Սարգսյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը տեղեկացրեց, որ հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ մասը՝ ելույթի համար ձայնը տրվում է Գրիգորի Երիցյանին:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման հավելվածի 104-րդ կետի՝ Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի կողմից ժամը 13.00-14.00-ն հայտարարվեց ընդմիջում:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին: Ժամը 14.30-ի դրությամբ Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը չներկայացավ նիստին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում քաղաքապետը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն (կցվում է), որն ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը Երևանի քաղաքապետի 13.12.2021թ. հ.615-Ա կարգադրությամբ գտնվում է արձակուրդում, իսկ նիստին ներկա տարիքով ավագ անդամը հանդիսանում է Մարատ Թոխյանը, ուստի նիստը վարեց Մարատ Թոխյանը:

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը և ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

Նիստը վարող Մարատ Թոխյանի կողմից ձայնը տրվեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի անդամ Անի Խաչատրյանին:

Անի Խաչատրյանը ներկայացրեց «Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման գաղտնի քվեարկության ընթացակարգը.

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 114-րդ կետի 21-րդ ենթակետի՝ «Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի քվեարկության համար սահմանել՝

1. քվերկությունն անցակցվում է «Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի քննարկման ավարտից անմիջապես հետո՝ կես ժամվա ընթացքում.

2. քվեարկության վայրը՝ ք. Երևան, Արգիշտիի 1, 5-րդ հարկ, ավագանու նիստերի դահլիճ.

3. քվեարկությունն անցկացվում է գաղտնի՝ Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 114-րդ կետի 21-28-րդ պահանջներին համապատասխան:

Հայտարարվեց «Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման գրանցում (Երևան քաղաքի ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի 22 դեկտեմբերի 2021թ. N 4 արձանագրություն):

Հայտարարվեց «Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման գաղտնի քվեարկություն:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 16.30-ին:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի 22 դեկտեմբերի 2021 թվականի N 5 արձանագրության՝

1) քվեարկության մասնակիցների թիվը 57

2) քվեաթերթիկների թիվը 67

3) մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը 10

4) անվավեր քվեաթերթիկների թիվը 3

5) քաղաքապետի թեկնածուին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 44

6) քաղաքապետի թեկնածուին դեմ քվեարկած քվեաթերթիկների թիվը 10:

«Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունվեց:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՄԱՐԱՏ ԹՈՒՅԱՆ

